Հարգելի՛ դասախոսներ, ուսանողներ, հյուրեր, ծնողներ, այսօր մեր երեխաների կյանքի ամենակարևոր և հիշարժան օրերից մեկն է: Նրանք այսօր իսկապես ոտք են դնում մեծ կյանքի շեմին: Գեղեցիկ այս օրը թևածում են բարեմաղթանքներն ու հարազատ ժպիտները՝ գալիքին անկեղծորեն հանդիպելու պատրաստակամությամբ: Եվ թույլ տվեք ասել, որ նրանք իրենց ձեռք բերած գիտելիքներով միանգամայն պատրաստ են հասուն կյանքի ուղին սկսելու, և դրա երաշխիքը անշուշտ պատկանում է իրենց դասախոսներին, ովքեր ջանք չեն խնայել հարստացնելու նրանց գիտելիքների զինանոցը՝ լավ գիտակցելով, որ միայն կրթված և բազմակողմանի զարգացած անձինք են հասնում հաջողության:

Արվեստը բոլոր ժամանակներում և բոլոր հասարակություններում եղել է յուրահատուկ ներշնչանքի և ուշադրության առարկա: Արվեստը մեր ընկալումներում երկնաշնորհ բան է, որին տիրապետելիս դառնում ես արարչագործ: Այսուհանդերձ, այդ նույն արվեստն ունի այբ-բեն-գիմ, որն արժե և պետք է սովորել, և որը սովորելու համար մեր երեխաները եկան այստեղ՝ այդ արվեստին աշակերտած մարդկանց մոտ: Ինչպես գրել է մեծ մտածող Դրայզերը՝ արվեստը մեղր է՝ պահպանված մարդկային հոգիների միջոցով և հավաքված զրկանքների ու տքնանքների թևերով:

Բոլոր ծնողների անունից, հարգելի՛ դասախոսներ, շնորհակալություն եմ հայտնում ձեզ. դուք մեր երեխաների համար արել եք թերևս ավելին, քան ծնողները կարող էին անել: Մաղթում եմ ձեզ բարձր տրամադրություն, հավատ՝ վաղվա լուսավոր օրվա հանդեպ: Թո՛ղ արևը խոնարհվի ձեր ճանապարհին, երկինքը հարթեցնի իր ամպե կնճիռները, և ծիածանը լինի ուղեկիցը ձեր: Շնորհակալություն, սիրելի՛ դասախոսներ, ձե՛զ մեր երախտագիտությունը, անսահման սերն ու նվիրվածությունը.

Ուզում եմ այսօր երկնքից արև,
Եվ մի ողջ գարուն ձեզ ընծա բերել,
Ուզում եմ այսօր ձեզ երազ ու սեր,
Աստղային ժպիտ ու կյանք պարգևել:
Թո՛ղ ես այսօր ձեզ բարին մաղթեմ,
Ծով երջանկությամբ ձեր կյանքը լցնեմ:
Լինեք երջանիկ և այնքան բարի,
Որ ձեզնով վառվեն լույսերն աշխարհի: